evocaBANK

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳ - 28.10.2024թ.

1. Նպատակը

Սույն Կարգի նպատակն է սահմանել Բանկի գործունեության համապատասխանությունը բնապահպանական և սոցիալական ստանդարտներին, ինչպես նաև Բանկի կողմից ֆինանսավորվող գործարքների, դրանց կառավարման, մոնիթորինգի, շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ կիրառվող սկզբունքների և ստանդարտների, բնապահպանական և սոցիալական պոտենցիալ ռիսկերը, Բանկի սոցիալական և շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ պարտավորությունները, ինչպես նաև ստորաբաժանումներին, որոնք պատասխանատու են սոցիալական և բնապահպանական ռիսկերի կառավարման համար:

Սույն Կարգը բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարումը Բանկի բիզնես գործընթացներին ինտեգրող շրջանակ է: Դա գործողությունների և միջոցառումների ամբողջություն է, որոնք իրականացվում են Բանկի ռիսկերի կառավարման ընթացակարգերի հետ միաժամանակ: Այս Կարգը կօգնի Բանկին խուսափել և կառավարել հնարավոր բնապահպանական և սոցիալական ռիսկեր ունեցող վարկերը՝ իրականացնելով բնապահպանական և սոցիալական ռիսկերի պատշաճ վերլուծություն վարկի տրամադրումից առաջ և վարկային պայմանագրի գործողության ընթացքում նախագծերի պատշաճ վերահսկմամբ:

2. Սահմանումներ և հապավումներ

- **Բանկ** - «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ,
- **Կարգ** - Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման կարգ,
- **ՀՀ դրամ**- Հայկական դրամ
- **ԲՍՄ (E&S)** – Բնապահպանական և սոցիալական միջավայր,
- **ԲՍԿՀ (ESMS)** - Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգ,
- **ՎՄ**- Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների վարկային մասնագետներ,
- **Բնապահպանական և սոցիալական պահանջներ** - Բնապահպանական, առողջապահական, սոցիալական, աշխատանքային և անվտանգության վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջներ, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական ապահովության վերաբերյալ պահանջներ, որոնք պետք է կատարվեն Հաճախորդների կողմից,
- **Բացառությունների ցանկ** - Գործունեությունների ցանկ, որը շատ մեծ բացասական ազդեցություն ունի ԲՍՄ վրա, որի ֆինանսավորումը արգելվում է Բանկի կողմից (Հավելված PRD20-0001-11_1),
- **Հաճախորդ** - Իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ, որն օգտվում է Բանկի կողմից առաջարկվող ծառայություններից կամ դիմել է վերջինիս համար, կամ չի դիմել, սակայն հանդիսանում է Բանկի համար պոտենցիալ վարկառու,
- **Վարկ** - Բանկի Վարկային քաղաքականությամբ սահմանված վարկեր, ինչպես նաև փաստաթղթային ակրեդիտիվներ և դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորում (ֆակտորինգ),
- **Նախագիծ** – Հաճախորդների կողմից ներկայացված վարկային հայտեր, որոնք ուսումնասիրվում են Բանկի կողմից,
- **Բնապահպանական և սոցիալական գնահատման ստուգաթերթ** - ստուգաթերթ, որը լրացվում է ՎՄ կողմից և նկարագրում է նախագիծը և դրա ազդեցությունը ԲՍՄ վրա (Հավելված PRD20-0001-11_3),
- **Ֆինանսավորող կազմակերպություն** - հաստատություն (պետական կամ մասնավոր) կամ ֆոնդ, որը միջոցներ է տրամադրում Բանկին բիզնեսի գործունեության ֆինանսավորման համար:

3. Հավելվածներ

PRD20-0001-11_1	Բացառությունների ցանկ
PRD20-0001-11_2	ԲՍՄ ռիսկերի գնահատում
PRD20-0001-11_3	Բնապահպանական և սոցիալական գնահատման ստուգաթերթի օրինակելի ձև
PRD20-0001-11_4	ԲՍՄ ռիսկերի մոնիթորինգի հաշվետվության օրինակելի ձև
PRD20-0001-11_5	Տնտեսության ոլորտների դասակարգում ըստ բնապահպանական ռիսկերի կատեգորիայի

4. Ընդհանուր դրույթներ

4.1. Սույն Կարգի իմացությունը պարտադիր է Բանկի բոլոր աշխատակիցների համար, որոնք ներգրավված են վարկերի տրամադրման գործընթացում:

4.2. ԲՍԿՀ կիրառվում է Բանկի կողմից տրամադրվող բոլոր առևտրային վարկերի համար:

4.3. ԲՍԿՀ պատշաճ կատարման համար պատասխանատվությունը կրում է Ռիսկերի կառավարման վարչությունը:

4.4. Վարկերի տրամադրման ընթացքում Բանկի աշխատակիցները պետք է խստորեն հետևեն սույն Կարգով սահմանված պահանջներին: Սույն Կարգով սահմանված պահանջները խախտելու դեպքում, խախտում կատարած աշխատակիցը, կախված խախտման աստիճանից, կենթարկվի պատասխանատվության՝ ընդհուպ մինչև պատճառված վնասի փոխհատուցում և աշխատանքից ազատում (համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի):

4.5. Բանկում նշանակվում է ԲՍԿՀ պատասխանատու անձ:

4.6. Բանկի Խորհրդի կազմից նշանակվում է ԲՍԿՀ համակարգող: ԲՍԿՀ համակարգողը պետք է ունենա համապատասխան որակավորում ԲՍՄ ռիսկերի կառավարման ոլորտում: Դրա համար համակարգողը պետք է հաջողությամբ անցնի “Sustainability Training and E-learning Program (STEP)” դասընթացը և ունենա Համաշխարհային բանկի խմբի բաց ուսուցման հաստատության կողմից տրված վկայագիր[1]:

4.7. Բանկի այն աշխատակիցները, որոնք ներգրավված են Վարկերի տրամադրման գործընթացում (ՎՄ, Ռիսկերի կառավարման վարչության աշխատակիցներ, Իրավաբանական բաժնի աշխատակիցներ, Վարկերի մոնիթորինգների բաժնի աշխատակիցներ, ԲՍԿՀ պատասխանատու անձ) պետք է ունենան համապատասխան որակավորում ԲՍՄ ռիսկերի կառավարման ոլորտում: Դրա համար վերջիններս պետք է հաջողությամբ անցնեն “Sustainability Training and E-learning Program (STEP)” դասընթացը:

4.8. Անհրաժեշտության դեպքում Բանկը, ինքնուրույն կամ Հաճախորդի միջնորդությամբ քննարկումներ է կազմակերպում շահագրգիռ կողմերի կամ հասարակության հետ՝ ԲՍՄ պաշտպանության հարցերի վերաբերյալ:

4.9. Բանկը խթանում է ԲՍՄ պաշտպանությանն ուղղված գործունեությունը: Բանկը խրախուսում է Հաճախորդներին, միջոցներ ձեռնարկել էներգիայի ինտենսիվությունը նվազեցնելու համար, խթանում է այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործումը:

4.10. Բանկն ապահովում է, որ իր գործունեությունը լինի հնարավորինս էկոլոգիապես չեզոք: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում բնական ռեսուրսների պահպանմանը, ինչպիսիք են ստորգետնյա ջրերը, ափամերձ տարածքները, բնական այգիները, անտառային ռեսուրսները, ձկնաբուծարանները, ինչպես նաև վայրի բնության աղտոտման կանխումը:

4.11. Սույն Կարգի շրջանակներում Բանկի հիմնական նպատակներն են.

4.11.1. Չֆինանսավորել այնպիսի գործունեությունները, որոնք կունենան բացասական ազդեցության զգալի ռիսկեր ԲՍՄ վրա,

4.11.2. ՈՒսումնասիրել Նախագծերը, ճշգրիտ գնահատել ԲՍՄ ռիսկերը, բնապահպանական ռիսկերի կատեգորիայի նշում և դիտարկման ենթակա Նախագծերի պատշաճ ուսումնասիրություն և ստուգում,

4.11.3. Իրականացնել մոնիթորինգ և հաշվառում,

4.11.4. Պարբերաբար վերանայել ԲՍԿՀ-ն և կատարելագործել,

4.11.5. Պատրաստել արտաքին հաշվետվություններ (Ֆինանսական կազմակերպությունների համար Հաճախորդի գործունեության հետ կապված միջադեպերի և պատահարների վերաբերյալ հաշվետվությունների պատրաստում, Նախագծերի բնապահպանական և սոցիալական արդյունավետության գնահատման վերաբերյալ հաշվետվությունների պատրաստում),

4.11.6. Հստակ սահմանել ԲՍԿՀ իրականացման կատարողներին և պատասխանատուներին,

4.11.7. Հատկացնել ռեսուրսներ ԲՍԿՀ բյուջեի և դասընթացների համար:

4.12. Բանկն ուսումնասիրում է Հաճախորդի սոցիալական քաղաքականությունը, մասնավորապես.

4.12.1. Հաճախորդը պետք է ապահովի աշխատակիցների միջև խտրականության բացակայությունը (ներառյալ՝ տարիքային, սեռական, ռասայական խտրականությունը, քաղաքացիությունը, ազգությունը, կրոնը, հաշմանդամ լինելը, սեռական կողմնորոշվածությունը, եթե դրանք կապված չեն կոնկրետ աշխատանքի պայմանների և պահանջների հետ) և հավասար պայմանների առկայությունը,

4.12.2. Հաճախորդը պետք է ապահովի աշխատակիցների անվտանգությունն ու առողջությունը՝ ստեղծելով այնպիսի աշխատանքային պայմաններ, որոնք հաշվի են առնում տվյալ ոլորտում առկա կոնկրետ աշխատանքային ռիսկերը (ներառյալ՝ ֆիզիկական, քիմիական, բիոլոգիական և ռադիացիայի վտանգը): Հաճախորդը պետք է միջոցառումներ ձեռնարկի դժբախտ պատահարները կանխարգելելու նպատակով,

4.12.3. Հաճախորդը պետք է գործի աշխատանքային օրենսգրքին համապատասխան, որով սահմանվում են աշխատանքային հիմնական ստանդարտները և նորմատիվները (ներառյալ՝ առավելագույն աշխատանքային ժամերի, նվազագույն աշխատավարձի չափի պահպանումը, երեխաների կամ հարկադիր աշխատանքի օգտագործման արգելումը):

[1] *Մանրամասների համար անցեք հղումով: https://www.ifc.org/wps/wcm/connect/topics_ext_content/ifc_external_corporate_site/sustainability-at-ifc/company-resources/tools+for+clients#STEP*

4.13. Վարկային պայմանագրերում պետք է լինեն դրույթներ, որոնք կսահմանեն, որպեսզի նախագծերը համապատասխանեն Բանկի բնապահպանական և սոցիալական պահանջներին:

5. ԲՍՄ ռիսկերի դասակարգման և գնահատման գործընթաց

5.1. Նախագծի ուսումնասիրության սկզբնական փուլում գնահատվում է գործունեությունը և

5.1.1. Եթե Նախագիծը ներառված է, որպես բացառված գործունեություն, որը սահմանված է Բացառությունների ցանկով (Հավելված PRD20-0001-11_1), ապա այն չի դիտարկվում որպես ֆինանսավորվող Նախագիծ,

5.1.2. Եթե նախագիծը բնապահպանական և սոցիալական միջադեպերի պատմություն ունի, ապա այն չի դիտարկվում որպես ֆինանսավորվող Նախագիծ,

5.1.3. Եթե նախագիծը պարունակում է գործունեություն, որը թույլատրված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ապա այն չի դիտարկվում որպես ֆինանսավորվող Նախագիծ:

5.2. Նշված 4 նախնական քայլերից հետո, եթե նախագիծը համապատասխանում է վերը նշված բոլոր պահանջներին, ապա այն գնահատվում է: Ստորև նկարագրված գնահատումը տարածվում է միայն հետևյալ Վարկերի վրա.

- 20 միլիոն ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը գերազանցող վարկեր,
- 10 միլիոն ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը գերազանցող Վարկեր, որոնց դեպքում Հաճախորդի Բանկում գործող բոլոր Վարկերի հանրագումարը գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

5.2.1. Միկրոֆինանսավորման վարկերը ավտոմատ կերպով գնահատվում են որպես ցածր ռիսկային վարկեր (Դաս «Գ») և դուրս են վերը նկարագրված գնահատման շրջանակներից:

5.3. Նախագծերը դասակարգվում են ըստ ռիսկերի դասերի՝ կախված սոցիալական միջավայրի վրա ռիսկերի ազդեցության մակարդակից: Նախագծի ռիսկի վերջնական մակարդակը կախված է հետևյալ չորս գործոններից.

1. Նախագծի ռիսկի դաս, որը կապված է կազմակերպության գործունեության ոլորտների հետ,
2. Վարկի գումարը,
3. Վարկի ժամկետը,
4. Գրավի տեսակը:

5.4. Եթե Հաճախորդը Բանկում ունի մեկից ավելի Վարկեր, ապա որպես Վարկի գումար համարվում է Հաճախորդի բոլոր Վարկերի հանրագումարը, իսկ որպես վարկի ժամկետ համարվում է Հաճախորդի գործող վարկերի առավելագույն ժամկետը:

5.5. ԲՍՄ ռիսկի դասերն են.

1. **Դաս «Ա»**. Դրանք գործունեության ոլորտներ են, որոնք ամենայն հավանականությամբ կունենան անբարենպաստ ազդեցություններ, որոնց մեծ մասը անդառնալի են (օրինակ, հանգեցնում են հիմնական բնական միջավայրի կորստին), կարող են ազդել խոցելի խմբերի կամ էթնիկ փոքրամասնությունների վրա, ընդգրկել տեղահանություն և վերաբնակեցում կամ ազդեցություն ունենալ մշակութային ժառանգության նշանակալի օբյեկտների վրա:
2. **Դաս «Բ»**. Դրանք գործունեության ոլորտներ են, որոնք բացասաբար են անդրադառնում ԲՍՄ վրա, բայց այդ ազդեցությունները մեծ չեն և հետևանքներից որոշներն են անդառնալի: Նախագիծը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վրա հատուկ ազդեցությունների, բայց այդ ազդեցությունները բնորոշ են տեղանքին և քիչ են, կամ դրանցից որևէ մեկն է անդառնալի: Համեմատած «Գ» դասի հետ, անբարենպաստ ազդեցությունների ներուժն ավելի շատ է, բայց դրանք հիմնականում կարող են կրճատվել լավ մշակված միջոցառումների շնորհիվ: Մարդկանց բնակության կամ բնապահպանական կարևոր տարածքների վրա հնարավոր անբարենպաստ ազդեցությունները պակաս անբարենպաստ են, քան «Ա» կատեգորիայի նախագծերը: Գործունեության այս ոլորտներում բացակայում է հարկադիր վերաբնակեցումը:
3. **Դաս «Գ»**. Նախագիծն ամենայն հավանականությամբ, կունենա շրջակա միջավայրի նվազագույն կամ ոչ բացասական ազդեցություն: Գործունեության այս ոլորտներում բացակայում է հարկադիր վերաբնակեցումը կամ բնակչության վրա վատ ազդեցությունը: Հետագա բնապահպանական գնահատում չի պահանջվում:

5.6. Ըստ գործունեության ոլորտների բնապահպանական ռիսկերի դասակարգման օրինակները սահմանված են Հավելված PRD20-0001-11_5-ով: Այն դեպքում, երբ PRD20-0001-11_5 հավելվածով սահմանված ոլորտների ցանկում բացակայում է հաճախորդի գործունեության ոլորտը, ապա ռիսկի մակարդակը որոշելու համար, ռիսկը գնահատող աշխատակիցը պետք է լրացնի հաճախորդի վերաբերյալ ամբողջական

տեղեկատվությունը (հաճախորդի անվանում, վարկի գումար, վարկի տեսակ, ժամկետ, նախագծի համառոտ նկարագրություն գործունեություն, գրավի տեսակ և այլն) և ներկայացնի Ռիսկերի կառավարման վարչություն՝ Ռիսկի դասը որոշելու նպատակով: Ըստ ներկայացված տվյալների, Ռիսկերի կառավարման վարչությունը հաճախորդի գործունեությունը դասակարգում է այլ ցածր ռիսկային, այլ միջին ռիսկային կամ այլ բարձր ռիսկային ոլորտների:

5.7. Նախագծի ռիսկի համապատասխան կատեգորիան որոշելուց հետո պետք է լինի ԲՍՄ ռիսկերի համապատասխան գնահատում համաձայն Հավելված PRD20-0001-11_2 - ի աղյուսակի և PRD20-0001-11_3 Հավելվածով սահմանված Բնապահպանական և սոցիալական գնահատման ստուգաթերթի միջոցով:

5.8. Բնապահպանական և սոցիալական գնահատման ստուգաթերթը կրում է օժանդակ բնույթ նախագծի ռիսկայնությունը գնահատելու համար: Դա տեղեկատվության մի տեսակ է և օգնում է Բանկին հասկանալ Հաճախորդի գործունեության ոլորտները: Հիմնական գնահատումը PRD20-0001-11_2 Հավելվածով սահմանված աղյուսակն է:

5.9. Ցածր ռիսկի դեպքում ԲՍՄ խորը ուսումնասիրության կարիք չկա: ՎՄ-ն ձեռնարկում է հետևյալ քայլերը.

5.9.1. Պարզում է արդյոք վերջին երեք տարվա ընթացքում Հաճախորդի նկատմամբ կիրառվել են քրեական դատապարտումներ, տուգանքներ, հետապնդումներ, պատժամիջոցներ և այլն (համաձայն ՀՀ օրենսդրության առողջության, անվտանգության, աշխատանքի և շրջակա միջավայրի պաշտպանության[2]),

5.9.2. Առկայության դեպքում պահանջում է բնապահպանական հրշեջ ծառայության կողմից տրված թույլտվություններ,

5.9.3. Ստացված տեղեկատվությունը լրացվում է ֆինանսատնտեսական վերլուծության ընթացքում կազմված վերլուծական ձևերում (առկայության դեպքում):

5.10. Միջին ռիսկի դեպքում ՎՄ-ն իրականացնում է 5.9 կետով նկարագրված քայլերը և հետևյալ քայլերը.

5.10.1. Իրականացնում է ավելի խորացված ուսումնասիրություններ,

5.10.2. Հաճախորդին այցելության ընթացքում (անհրաժեշտության դեպքում) քննարկում է ԲՍՄ խնդիրները, բարձրացնում է Հաճախորդի տեղեկացվածությունը, տալիս է խորհրդատվություն,

5.10.3. Միջոցներ է ձեռնարկում պարզելու, թե արդյոք իրականացվել են ստուգումներ ապահովագրական ընկերությունների և արտաքին աուդիտորների կողմից, եթե այդպիսիք կան, խնդրում է վերջիններիս հիման վրա հաշվետվությունները և պատճենները և դրանք պահպանում վարկային փաթեթում: Հաշվետվությունները կարող են ներառել ուսումնասիրություն շենքի վիճակի, հողի, սարքավորումների կամ առողջության և անվտանգության, հրդեհային պաշտպանության համակարգերի կամ բնապահպանական խնդիրների վերաբերյալ: Հաշվետվությունները կարող են նաև պարունակել տեղեկություններ, եթե Հաճախորդը դատական հայց է ներկայացրել ապահովագրական ընկերության դեմ:

5.11. Բարձր ռիսկային նախագծերի դեպքում՝

5.11.1. ՎՄ-ն ավելի խորացված է իրականացնում սույն կարգի 5.9 և 5.10 կետերում նշված քայլերը: Սա հաշվի առնելով՝ Բանկը ներգրավում է ԲՍՄ որակավորված արտաքին փորձագետ: Հնարավոր է պահանջվի ԲՍՄ ազդեցության գնահատում առկա նոր հիմնախնդիրների լուրջ փոփոխությունների կամ փոփոխությունների դեպքում: Վերաբնակեցման գործողությունների համար կարող է պահանջվել նաև վերաբնակեցման պլան:

5.11.2. Եթե ցածր ռիսկային և միջին ռիսկի նախագծերի դեպքում ցանկալի է այցելություն Հաճախորդին, ապա բարձր ռիսկային նախագծերի դեպքում այցելությունը Հաճախորդին պարտադիր է: Այցի համար կարող է անհրաժեշտ լինել ներգրավել տեխնիկապես որակավորված մասնագետ:

5.11.3. Բացի ուսումնասիրություններից, Բանկն իրականացնում է բնապահպանական և սոցիալական ազդեցության ամբողջական ուսումնասիրություն տեխնիկապես որակավորված մասնագետի ներգրավմամբ,

5.11.4. Բանկը Ֆինանսավորող կազմակերպությանը հայտնում է, որ նախագիծը դասվել է որպես բարձր ռիսկային:

6. Մոնիթորինգ և հաշվառում

6.1. Գործող պահանջներին շարունակական համապատասխանություն ապահովելու համար, նախագծերի բնապահպանական և սոցիալական ցուցանիշները դիտարկվում և գնահատվում են առնվազն տարին մեկ անգամ:

[2] http://www.irtek.am/views/act.aspx?aid=150003
http://mnp.am/am/pages/40

6.2. Մոնիթորինգ իրականացվում է միայն այն Հաճախորդների գծով, որոնց Բանկում գործող Վարկերի հանրագումարը գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

6.3. Մոնիթորինգն իրականացվում է (ներառյալ՝ ուղղիչ գործողությունների կարգավիճակը) Վարկերի մոնիթորինգների բաժնի կողմից:

6.4. Յուրաքանչյուր Նախագծի համար իրականացվում է բնապահպանական և սոցիալական վերանայումները հաստատող փաստաթղթավորում: Դա իր մեջ ներառում է բնապահպանական և սոցիալական ռիսկերի նախնական գնահատման տվյալները (նախագծի սկզբնական դիտարկման), ինչպես նաև ընթացիկ համապատասխանության վերաբերյալ գրառումներ:

6.5. Մոնիթորինգը հաշվի է առնում նաև ԲՍԿՀ պարբերաբար վերանայումները, որպեսզի այն ժամանակի ընթացքում լինի արդիական, գործի արդյունավետ և Բանկի զարգացմանը համահունչ: Այն պետք է բացահայտի ԲՍԿՀ գործընթացի իրականացման հետ կապված հնարավոր դժվարությունները և խոչընդոտները և անհրաժեշտության դեպքում կատարվի համապատասխան փոփոխություններ ԲՍԿՀ կարգավորող Բանկի ներքին իրավական ակտերում, որպեսզի ապահովվի Նախագծերի հնարավոր բնապահպանական և սոցիալական ռիսկերի արդյունավետ բացահայտումը և կառավարումը, ինչպես նաև կիրառվի ԲՍԿՀ արդիական պահանջները:

6.6. Մոնիթորինգն իրականացվում է հետևյալ ուղղություններով.
1. շրջակա միջավայրի պահպանման հսկողություն,
2. առողջության և անվտանգության պահպանման հսկողություն,
3. աշխատանքային պայմանների հսկողություն,
4. հարակից տարածքում բնակվող կամ գործունեություն ծավալող անձանց հետ քննարկում:

6.7. Վարկերի մոնիթորինգի մասնագետը տարեկան կտրվածքով կազմում է հաշվետվություններ, որոնք ներկայացված են Հավելված PRD20-0001-11_4 - ում: Այնուհետև հաշվետվությունը ներկայացվում է ԲՍԿՀ համակարգողին և ԲՍԿՀ պատասխանատուին: Հաշվետվության միջոցով պարզվում է, թե արդյոք ԲՍՄ ռիսկերը պատշաճ կերպով գնահատվում են, իսկ խնդիրների դեպքում միջոցներ է ձեռնարկվում առկա ռիսկերը մեղմելու համար:

6.8. Եթե մոնիթորինգի ընթացքում պարզվում է, որ պայմանների փոփոխության հետ կապված գրանցվել են ԲՍՄ անբարենպաստ հետևանքներ և (կամ) ԲՍՄ հետ կապված Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտումներ, ապա Վարկերի մոնիթորինգների բաժինը այդ մասին տեղեկացնում է ԲՍԿՀ պատասխանատուին: Վերջինս այդ մասին տեղեկացնում է Ֆինանսավորող կազմակերպությանը: Կազմվում է ԲՍՄ ռիսկերի բացասական ազդեցությունը զսպելու միջոցառումների ծրագիր, որը պետք է իրականացվի Հաճախորդի կողմից:

7. Կատարողներ և պարտականություններ

7.1. ԲՍԿՀ գործընթացում անհրաժեշտ է նախնական որոշել ԲՍՄ Նախագծերի իրականացման հետ կապված յուրաքանչյուր ստորաբաժանման և աշխատակիցների դերերն ու պարտականությունները:

7.2. ԲՍԿՀ գործընթացում նշանակալի դեր ունեն հետևյալ ութ խմբի կատարողները.
- ՎՄ
- Ռիսկերի կառավարման մասնագետներ
- ԲՍԿՀ պատասխանատու անձ
- Իրավաբանական բաժնի մասնագետներ
- Վարկերի մոնիթորինգների բաժնի մասնագետներ
- Վարկային կոմիտե
- ԲՍԿՀ համակարգող
- Վարչություն

7.3. ԲՍԿՀ պատասխանատու անձ է հանդիսանում Ռիսկերի կառավարման վարչության պետը:

7.4. ԲՍԿՀ համակարգողը ընտրվում է Բանկի Խորհրդի կազմից և կարող է լինել Խորհրդի անդամներից որևէ մեկը: Խորհրդի անդամի ընտրությունը, նշանակումը և գործունեության ձևը սահմանում է Բանկը:

7.5. ՎՄ պարտականությունները ԲՍՄ ռիսկերի կառավարման ոլորտում հետևյալն են.
- Հաճախորդից ընդունում է Նախագծերը և դրան վերաբերող փաստաթղթերը,
- ՈՒսումնասիրում է Նախագիծը՝ համեմատելով Բացառությունների ցանկի հետ (հավելված PRD20-0001-11_1),
- ՈՒսումնասիրում է բնապահպանական և սոցիալական միջադեպերի պատմությունը,
- ՈՒսումնասիրում է Նախագծի ոլորտը և տեխնիկական ասպեկտները,
- Գնահատում է Նախագիծը և տալիս է ռիսկի կատեգորիա (հավելված PRD20-0001-11_2),

- Լրացնում է Բնապահպանական և սոցիալական գնահատման ստուգաթերթը (հավելված PRD20-0001-11_3),
- Հաճախորդից Նախագիծն ընդունելուց 5 աշխատանքային օրվա ընթացքում Վարկային կոմիտեին և Ռիսկերի կառավարման վարչությանը ներկայացնում է Նախագծի ամբողջ փաթեթը՝ սեփական եզրակացությամբ և լրացված ստուգաթերթով:
- Միջին ռիսկի (անհրաժեշտության դեպքում) և բարձր ռիսկային նախագծերի դեպքում, այցելում է Հաճախորդի գործունեության վայր, անհրաժեշտության դեպքում ներգրավելով համապատասխան մասնագետների,
- Հաճախորդի հետ կապի պահպանում,
- Վարկային կոմիտեի կողմից Նախագծի ֆինանսավորման որոշման մասին ծանուցում է Հաճախորդին որոշումն ընդունելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:

7.6. Ռիսկերի կառավարման մասնագետի պարտականությունները ԲՍՄ ռիսկերի կառավարման ոլորտում հետևյալն են.

- Ուսումնասիրում է Նախագծի ամբողջական փաթեթը,
- Ստուգում է, արդյոք ՎՄ-ն սահմանում է ԲՍՄ ռիսկի կատեգորիա նախագծի համար, որը պետք է կատարվի ՎՄ- ի կողմից նախագիծն ընդունելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում
- Ստուգում է ՎՄ կողմից Բնապահպանական և սոցիալական գնահատման ստուգաթերթի լրացման համապատասխանությունը,
- ԲՍՄ ռիսկերը գնահատելու համար իրականացնում է Նախագծի պատշաճ ուսումնասիրություն,
- Անց է կացնում դասընթացներ ԲՍՄ գծով:

7.7. Վարկերի մոնիթորինգների մասնագետի պարտականությունները ԲՍՄ ռիսկերի կառավարման ոլորտում հետևյալն են.

- Հետևում է Նախագծին՝ ապահովելու համար, որ հնարավոր բնապահպանական և սոցիալական ռիսկերը հաղթահարելու ուղղիչ գործողությունների պլաններն արդյունավետորեն իրականացվեն (ինչպես դա պահանջվում է վարկային պայմանագրով), անհրաժեշտության դեպքում ներգրավելով խորհրդատուների,
- Բանկի Վարչության համար պատրաստում է տարեկան հաշվետվություն իրականացված Նախագծերի բնապահպանական և սոցիալական կատարողականի գնահատման վերաբերյալ,
- Պարբերաբար հարցում և ստուգում է Նախագծերի վերաբերյալ հաշվետվությունները, ներառյալ միջադեպերի և պատահարների մասին հաշվետվությունները,
- Տնտեսության ոլորտների և տեխնիկական ասպեկտների վերանայում,
- 3 աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվություն է տրամադրում Վարկային կոմիտեին, եթե Հաճախորդը մեծ պատահար կամ միջադեպ է ունենում, որոնք արժանանում եմ ԶԼՄ-ների ուշադրությանը,
- Յուրաքանչյուր ծրագրի համար վարում է գրառումներ:

7.8. Իրավաբանական բաժնի մասնագետի պարտականությունները ԲՍՄ ռիսկերի կառավարման ոլորտում հետևյալն են.

- Ստուգում է Հաճախորդի կողմից հաստատված լինելու փաստը այն մասին, որ իր գործողությունները չեն հակասում բնապահպանական, առողջապահական, սոցիալական, աշխատանքային և անվտանգության գծով ՀՀ օրենսդրությանը, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական ապահովության պահանջներին:
- Ապահովում է բոլոր վարկային պայմանագրերի համապատասխանությունը շրջակա միջավայրի, առողջության և անվտանգության վերաբերյալ գործող օրենսդրությանը,
- Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման շրջանակներում, Իրավաբանական բաժինը Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա կարող է կարծիք տալ տրամադրվող Վարկերի վերաբերյալ (առանց Հաճախորդին այցելություն կատարելու և լրացուցիչ փաստաթղթերի/հաստատման հարցման, հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հավաստիության երաշխիքի):

7.9. Վարկային կոմիտեի պարտականությունները ԲՍՄ ռիսկերի կառավարման ոլորտում հետևյալն են.

- Ընդունում է Նախագծի ամբողջական փաթեթը ռիսկերի կատեգորիաների գնահատման գործընթացում ներգրավված ստորաբաժանումների եզրակացություններով,
- Ուսումնասիրում է, թե արդյոք ռիսկի մակարդակն ընդունելի է,
- Նախագծի վերաբերյալ կայացնում է որոշում, ֆինանսավորել, թե՝ ոչ,
- Տեղեկացնում է համապատասխան ստորաբաժանումներին ֆինանսավորման որոշման մասին,

7.10. ԲՍԿՀ պատասխանատու անձի պարտականությունները ԲՍՄ ռիսկերի կառավարման ոլորտում հետևյալն են.
- ԲՍՄ ռիսկերի գնահատման և կառավարման գործընթացների համակարգում,
- Բարձր ռիսկային նախագծերի մասին տեղեկացնում է Ֆինանսավորող կազմակերպությանը, Նախագիծը դասակարգվելուց 3 աշխատանքային օրվա ընթացքում, մինչև վարկի տրամադրման վերաբերյալ որոշում կայացնելը,
- Այն դեպքերում, երբ վարկերը տրամադրվում են ֆինանսավորող կազմակերպության ռեսուրսներով, ապա տարեկան կտրվածքով ֆինանսավորող կազմակերպությանը տրամադրում է հաշվետվություն պատահարների և միջադեպերի վերաբերյալ,
- Խստորեն հետևում է, որ ԲՍՄ գնահատման և կառավարման հետ կապված բոլոր գործընթացները իրականացվեն են սույն Կարգով սահմանված չափանիշների համապատասխան և ժամկետներում,
- Վարկի տրամադրման մասին որոշում կայացնելու համար մասնակցում է վարկային կոմիտեի նիստերին,
- Ավագ ղեկավարությանը տեղյակ է պահում ԲՍԿՀ իրականացման հետ կապված մարտահրավերների, հաջողությունների և այլ կարևոր հարցերի մասին,
- Անմիջապես հաշվետու է Բանկի Խորհրդին,
- Համագործակցում է Բանկի այլ ստորաբաժանումների հետ ԲՍՄ հարցերի և գործընթացների վերաբերյալ:

7.11. ԲՍԿՀ համակարգողի պարտականությունները ԲՍՄ ռիսկերի կառավարման ոլորտում հետևյալն են.
- Քննարկում և հաստատում է ԲՍՄ ոլորտում Բանկի քաղաքականությունը և ռազմավարությունը,
- Որոշում է ԲՍՄ ռիսկի ինստիտուցիոնալ ախորժակը,
- Պարբերաբար ստուգում է ԲՍՄ արդյունավետությունը,
- Ապահովում է ԲՍՄ հարցերի վերաբերյալ պարբերաբար համագործակցությունը Բանկի շահագրգիռ կողմերի հետ:

7.12. Բանկի Վարչության պարտականությունները ԲՍՄ ռիսկերի կառավարման ոլորտում հետևյալն են.
- Ֆինանսավորող կազմակերպությանը տրամադրում է տեղեկատվություն ԲՍԿՀ պատասխանատու անձի վերաբերյալ (անուն, ազգանուն, աշխատանքային փորձ, անհրաժեշտության դեպքում այլ տեղեկություններ),
- Բյուջեի և այլ միջոցների չափի որոշում, որոնք կծախսվեն ԲՍՄ գծով վերապատրաստման և ԲՍՄ հարցերի վրա (օրինակ՝ արտաքին տեխնիկական մասնագետների ներգրավման, Հաճախորդի գործունեության վայր այցելության համար):

7.13. Վարկերի տրամադրման վերաբերյալ որոշումներն ընդունվում են Վարկային կոմիտեի կողմից վարկերի տրամադրման վերաբերյալ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով: Բարձր ռիսկային նախագծերի դեպքում Բանկը ֆինանսավորում է նախագիծը, եթե Վարկային կոմիտեի բոլոր անդամները կողմ քվեարկեն Նախագծին:

8. ԲՍԿՀ բյուջե և դասընթացներ

8.1. Բանկն իր տարեկան բյուջեից միջոցներ է հատկացնում ԲՍԿՀ համար: Ռեսուրսները պետք է օգտագործվեն ԲՍԿՀ գործընթացների ուսուցման համար, անձնակազմի ԲՍԿՀ պարտականությունները կատարելու համար, ԲՍԿՀ փաստաթղթերի ու նյութերի համար:

8.2. Բանկը անձնակազմի համար կազմակերպում է ԲՍԿՀ դասընթացներ՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով խորհրդատուներ, որպեսզի անձնակազմին բացատրեն ԲՍԿՀ նպատակը, վերանայում է ներդրումային պորտֆելը, ըստ տնտեսության ոլորտների՝ դիտարկելով տնտեսության ոլորտների բնապահպանական և սոցիալական ռիսկերի ասպեկտները, անհրաժեշտության դեպքում ԲՍԿՀ գործընթացների ներդրման, թարմացման, վերանայման հետ կապված անձնակազմի կոնկրետ սպասումները:

8.3. Ռիսկերի կառավարման վարչությունը սահմանում է դասընթացների պարբերականությունը, ամսաթվերը, մասնակիցներին և դասընթացների ընթացքը:

8.4. ԲՍԿՀ դասընթացներին մասնակցությունը պարտադիր է Բանկի բոլոր նոր աշխատակիցների համար, որոնք ներգրավված են ԲՍՄ գործընթացում:

8.5. Բանկը հատկացնում է ռեսուրսներ, որպեսզի ապահովվի ԲՍԿՀ ռիսկերի կառավարման գործընթացում բոլոր անհրաժեշտ չափանիշների համապատասխանությունը:

Բանկը չպետք է ֆինանսավորի հետևյալ գործունեությունները.

- Ցանկացած ապրանքների արտադրություն կամ վաճառք կամ այնպիսի գործունեություն, որոնք Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ միջազգային կոնվենցիաներով և համաձայնագրերով համարվում են անօրինական կամ առկա են միջազգային արգելքներ, ինչպիսիք են վտանգավոր դեղորայքը, թունաքիմիկատները, օզոնային շերտը քայքայող նյութերը, պոլիքլորինացված դիֆենիլ (PCBs) պարունակող նյութերը, վայրի բնության տարրերն ու CITES կոնվենցիայով կարգավորվող կենդանիները, բույսերը:
- Զենք զինամթերքի արտադրություն կամ առևտուր[3]:
- Ալկոհոլային խմիչքների արտադրություն կամ առևտուր (բացառությամբ գարեջրի և գինու) [3]:
- Ծխախոտի արտադրություն կամ առևտուր[3]:
- Մոլախաղեր, խաղատներ և նմանատիպ գործունեություն[3]:
- Ռադիոակտիվ նյութերի արտադրություն կամ առևտուր: Սա չի տարածվում բժշկական սարքավորումների, որակի վերահսկման (չափման) սարքավորումների և այն սարքավորումների վրա, երբ Բանկը համարում է, որ ռադիոակտիվ աղբյուրը չնչին է և (կամ) պատշաճ կերպով պաշտպանված:
- Անսահմանափակ ասբեստի մանրաթելերի արտադրություն կամ առևտուր: Սա չի տարածվում կապակցված ասբեստի ցեմենտի թերթերի գնման և օգտագործման վրա, երբ ասբեստի պարունակությունը 20% -ից պակաս է:
- Ջրային միջավայրում ցանցային ձկնորսությունը՝ օգտագործելով 2.5 կմ-ից ավելի երկարություն ունեցող ցանցեր:
- Արտադրություն կամ գործունեություն, որոնք կապված են հարկադիր աշխատանքի վնասակար կամ շահագործելի ձևերի հետ[4] (Երեխայի ներգրավմամբ վնասակար աշխատանք) [5]:
- Առևտրային անտառահատման գործունեություն նորաստեղծ արևադարձային խոնավ անտառներում:
- Փայտի կամ այլ անտառային տնտեսության արտադրանքի արտադրություն կամ առևտուր, բացի կայուն կառավարվող անտառներից:

---

[3] *Սա չի տարածվում ծրագրի հովանավորների վրա, ովքեր էականորեն ներգրավված չեն այդ գործունեության մեջ: «Էականորեն ներգրավված չէ» նշանակում է, որ տվյալ գործունեությունը օժանդակ է նախագծի հովանավորի հիմնական գործունեությանը:*

[4] *Հարկադիր աշխատանք նշանակում է այն աշխատանքը կամ ծառայությունը, որը կամավոր չի կատարվել, որը կատարվում է բռնության կամ տույժի սպառնալիքի տակ:*

[5] *Նշանակում է երեխաների զբաղվածություն, որոնք տնտեսապես շահավետ են, սակայն կարող են վտանգավոր լինել կամ խանգարել երեխայի կրթությանը կամ վնասել երեխայի առողջությանը, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական կամ սոցիալական զարգացմանը:*

ԲՍՄ ռիսկի գործոններ	**Ռիսկի մակարդակ (Y)**	**Ռիսկի կշիռ (Z)**	**(Y) x (Z)**
Գործունեության ոլորտ	(Դաս Գ) = 1 (Դաս Բ) = 2 (Դաս Ա) = 3	40	
Վարկի գումար (ՀՀ դրամ)[6]	(20 000 001- 70 000 000) = 1 (70 000 001- 350 000 000) = 2 (>350 000 000) = 3	20	
Վարկի ժամկետ[7]	(< 2 տարի) = 1 (2 - 5 տարի) = 2 (> 5 տարի) = 3	20	
Գրավի տեսակ[8]	շրջանառության մեջ գտնվող ապրանքներ, շարժական գույք, դրամական միջոցներ և ոչ գրավային ապահովվածության տեսակներ (օր. վարկային երաշխավորություն) = 1 բնակարան, հողատարածք = 2 շինություն,արդյունաբերական տարածք և այլ խոշոր անշարժ գույք = 3	20	
		Ընդամենը (Y) x (Z)	
Ռիսկի մակարդակի նախնական գնահատական		Ցածր ռիսկ	100-149
		Միջին ռիսկ	150-249
		Բարձր ռիսկ	250-300

[6] *Եթե Հաճախորդը Բանկում ունի մեկից ավելի Վարկեր, ապա որպես Վարկի գումար պետք է համարվի Հաճախորդի բոլոր վարկերի հանրագումարը*

[7] *Եթե Հաճախորդը Բանկում ունի մեկից ավելի Վարկեր, ապա վարկի ժամկետը համարվում է Հաճախորդի գործող վարկերի առավելագույն ժամկետը*

[8] *Միաժամանակ երկու և ավելի գրավների առկայության դեպքում հիմք է ընդունվում ամենամեծ արժեք ունեցող գրավը*

Բնապահպանական և սոցիալական գնահատման ստուգաթերթ	
Նախագծի անվանումը:	**Վայրը:**
Վարկի չափը (AMD) և ֆինանսավորման նպատակը:	
Ոլորտը:	**Նախագծի համառոտ նկարագրությունը:**
ԲՍՄ դասը:	**Էական Բնապահպանական և Սոցիալական Ռիսկեր, որոնք առնչվում են տվյալ ոլորտին (օրինակ.՝ կազմակերպության աշխատակիցների անվտանգության կամ առողջության, օդի աղտոտվածության, աղմուկի, քիմիական թափոնների և այլ խնդիրների մասով)**
Այցելության ամսաթիվը: **Ուսումնասիրվել է Ռիսկերի կառավարման մասնագետի կողմից**	**Անհրաժեշտ է լրացուցիչ տեխնիկական ստուգում:** • Այո • Ոչ

Համապատասխանությունն ընդունելի պահանջներին - նշել, եթե՝

- Հաճախորդի գործունեությունն ընդգրկված է Բացառությունների ցանկում
- Հաճախորդի գործունեությունը համապատասխանում է ՀՀ օրենսդրության պահանջներին
- Առկա են բնապահպանական, առողջապահական և անվտանգության թույլտվություններ
- Տեղի են ունեցել վնասվածքներ և մահվան դեպքեր (ինչպես և երբ _____)
- Աշխատանքի հետ կապված տուգանքներ (երբ և ինչու. _____)
- Տեղի են ունեցել բնապահպանական միջադեպեր և տուգանքներ (երբ և ինչու. _____)

Կառավարման համակարգեր - նշել, եթե առկա են՝

- Գրավոր բնապահպանական և սոցիալական քաղաքականություն
- Մարդկային ռեսուրսների գրավոր քաղաքականություն (օրինակ ՝ աշխատողների իրավունքների / խտրականությունների վերաբերյալ)
- Հակահրդեհային / անվտանգության պլան կամ արտակարգ իրավիճակների կանխարգելում / պատրաստվածություն / արձագանքման ծրագիր
- Բնապահպանական, առողջապահական և անվտանգության դասընթացներ աշխատակիցների համար
- Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման ընթացակարգեր
- Բնապահպանական և սոցիալական հարցերի համար պատասխանատու անձ
- Տեղեկատվություն փոխանակման ներքին գործընթաց

Նախագծի վայրը—նշել, եթե Հաճախորդի գործունեության վայրը գտնվում է՝

- Ոչ քաղաքային / չմշակված հողատարածքում
- Գետի / առվակի / լճակի / լճի / ծովի մոտակայքում
- Հատուկ պահպանվող տարածքի(օր. ՝ անտառային / վերացող տեսակի) / բնապահպանական զգայուն տարածքի (օրինակ ՝ ջրամբարներ / բուծման վայրեր) մոտակայքում
- Մշակույթային խոցելի տարածքի մոտակայքում

Բնապահպանական խնդիրներ—նշել բոլոր նրանք, որոնք առկա են:	
Օդի արտանետումներ • Գեներատորներ • Տրանսպորտային միջոցներ և սարքավորումներ • Վառարաններ և այրիչներ • Եռակցում և զոդում • Քիմիական նյութերի գոլորշիացում • Արտանետվող օդափոխության օգտագործում	*Կեղտաջրեր* • Կեղտաջրերը բաց են թողնվել _____ • Կեղտաջրերի կոյուղագծեր

Կոշտ և վտանգավոր թափոններ • Առաջացած թափոնները • Թափոնների տեսակները. _____ _____ _____ • Վտանգավոր թափոններ (օրինակ՝ մշակված յուղեր, թունաքիմիկատների լվացում, լուծիչներ, բժշկական թափոններ, ասբեստ) • Թափոնները վերացված են _____	*Վտանգավոր քիմիական նյութեր, վառելիք և թունաքիմիկատներ* • Տեղում քիմիական նյութերի կամ վառելիքի պահուստ • Պաշտպանական միջոցներ արտահոսքի դեմ • Արտահոսքի նշաններ • Անձրևից պաշտպանական միջոցառումներ • Կոռոզիայի նշաններ բաքերի / տարաների վրա • Թունաքիմիկատների օգտագործում
Ռեսուրսների սպառում • Օգտագործվող նյութեր. _____ _____ • Վերականգնվող բնական պաշարների օգտագործում • Գործիքների և սարքավորումների օգտագործում • Ջրի աղբյուր՝ _____ • Էներգիայի աղբյուր՝ _____	*Անհանգստություն* • Փոշի • Աղմուկ • Հոտեր • Գոլորշիներ • Վիբրացիա • Երթևեկության խցանում և խոչընդոտներ

Սոցիալական խնդիրներ —նշել, եթե առկա են՝
• Տեղական բնակավայրերի տեղահանում / վերաբնակեցում • Ազդեցությունը տեղական բնակավայրերի / ապրուստի միջոցների վրա • Բողոքներ հարևաններից / հասարակությունից • Մշակութային / հնագիտական նշանակության վայրում կամ դրան հարող տարածքում
Աշխատանքի խնդիրներ— նշել, եթե առկա են՝
• Անհատական պաշտպանիչ սարքավորումներ (օրինակ՝ անվտանգության ակնոց / կոշտ գլխարկ / պաշտպանիչ ձեռնոց) • Աշխատողների առողջության և անվտանգության ոչ համարժեք միջոցառումներ (օրինակ՝ վայր ընկնելու կանխարգելում / օդափոխում) • Անբավարար աշխատանքային պայմաններ (օրինակ՝ օդի որակ / լուսավորություն / սահմանափակ տարածքներ / տեղում հիգիենա) • Աշխատակիցների համար ոչ ադեկվատ պայմաններ (օրինակ՝ աշխատանքային ժամեր / արձակուրդային ընդմիջումներ / արձակուրդային ժամ / արտաժամյա աշխատավարձ) • Աշխատանքի ընդունման անհավասար հնարավորություններ (օրինակ՝ սեռի / էթնիկ խմբի / տարիքի նկատմամբ խտրականություն) • Նվազագույն աշխատավարձից ցածր աշխատավարձ • Սահմանված նվազագույն տարիքից ցածր աշխատողներ • Երեխաների կամ հարկադիր աշխատանք • Աշխատողների կողմից բողոքներ ներկայացնելու գործընթաց • Արհմիությունների հետ համագործակցություն
Բարձր ռիսկային նախագծեր՝ կազմակերպության գործունեությունը չի ներառում ստորև նշված դրույթները
• Հարկադիր վերաբնակեցում • բնիկ ժողովրդների նկատմամբ անբարենպաստ պայմանների ստեղծում • Էական ռիսկեր կամ ազդեցություններ շրջակա միջավայրի, համայնքի անվտանգության և առողջության, կենսաբազմազանության և մշակութային ժառանգության վրա՝ պարունակելով էական կրճատումներ • Աշխատանքի ժամանակ անվտանգության և առողջության վրա ազդող էական ռիսկեր

Բացահայտված ԲՍ Ռիսկեր/ՈՒղղիչ գործողությունների ծրագիր/Կանխարգելիչ միջոցառումներ	
Հավելյալ մեկնաբանություններ	
Վարկային մասնագետ (Անուն, Ազգանուն)	
Ստորագրություն	
Ամսաթիվ	

Հաճախորդ	
Ոլորտ	
Վարկի գումարը	
Ժամկետ	
Ռիսկի դասը	

ԲՍՄ մոնիթորինգ	
Նախագծի համառոտ նկարագրությունը:	
Այցելության ամսաթիվը:	
Ստուգման ժամանակ ակնհայտ բնապահպանական խնդիրները	Ինչ բնապահպանական խնդիրներ է առաջացնում նախագիծը • Օդի արտանետումներ • Կեղտաջրեր • Կոշտ և վտանգավոր թափոններ • Վտանգավոր քիմիական նյութեր, վառելիք և թունաքիմիկատներ • Ռեսուրսների սպառում • Անհանգստություն
Ակնհայտ սոցիալական խնդիրներ	• Հողի ձեռք բերումը պարտադիր է • Տեղական բնակավայրերի տեղահանում / վերաբնակեցում • Ազդեցությունը տեղական բնակավայրերի / ապրուստի միջոցների վրա • Ազդեցությունը բնիկ ժողովուրդների վրա • Բողոքներ հարևաններից / հասարակությունից • Մշակութային / հնագիտական նշանակության վայրում կամ դրան հարող տարածքում • Անհատական պաշտպանիչ սարքավորումներ չեն տրամադրվում (օրինակ՝ անվտանգության ակնոց / կոշտ գլխարկ / պաշտպանիչ ձեռնոց) • Աշխատողների առողջության և անվտանգության ոչ համարժեք միջոցառումներ (օրինակ՝ վայր ընկնելու կանխարգելում / օդափոխում) • Անբավարար աշխատանքային պայմաններ (օրինակ՝ օդի որակ / լուսավորություն / սահմանափակ տարածքներ / տեղում հիգիենա) • Աշխատակիցների համար ոչ ադեկվատ պայմաններ (օրինակ՝ աշխատանքային ժամեր / արձակուրդային ընդմիջումներ / արձակուրդային ժամ / արտաժամյա աշխատավարձ) • Աշխատանքի ընդունման անհավասար հնարավորություններ (օրինակ՝ սեռի / էթնիկ խմբի / տարիքի նկատմամբ խտրականություն) • Նվազագույն աշխատավարձից ցածր աշխատավարձ • Սահմանված նվազագույն տարիքից ցածր աշխատողներ Երեխաների կամ հարկադիր աշխատանք • Աշխատողների կողմից բողոքներ ներկայացնելու գործընթաց չկա • Աշխատակիցների ճանաչման կազմակերպությունների բացակայություն / արհմիություններ
Բնապահպանական և սոցիալական միջադեպեր / պատահարներ	Եթե դրանք տեղի են ունեցել
Առաջարկվող մեղմացման և մոնիթորինգի միջոցառումներ	նշեք Շահառուի / Նախագծի կողմից բարձրացված բնապահպանական խնդիրները լուծելու միջոցառումները, ինչպես կարող են դրանք ներառել Նախագծում և այդ միջոցառումների

	իրականացման և մոնիթորինգի պատասխանատուների համար հնարավոր հետևանքները:
Իրականացվող բնապահպանական հետազոտությունների տեխնիկական առաջադրանք	անհրաժեշտության դեպքում ներկայացրեք անհրաժեշտ շրջակա միջավայրի վերլուծությունը, ժամկետները և դրա հետ կապված ծախսերը
Հասարակության մասնակցության պահանջներ	Անհրաժեշտության դեպքում նշեք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները՝ տեղեկացնելու, խորհրդատվություն տալու կամ հասարակությանը, ոչ պետական կազմակերպություններին, այլ սուբյեկտներին և IBRD կարգավորումները ներգրավելու նպատակով:
Լրացուցիչ մեկնաբանություններ	

Ա դասի ոլորտներ

- Խոշոր ամբարտակներ և ջրամբարներ, հանքարդյունաբերություն և քարհանքեր
- Անտառային տնտեսություն և ծառահատումներ (լայնածավալ)
- Ագրոարդյունաբերություն, արդյունաբերական գործարաններ (լայնածավալ)
- Խոշոր նոր արդյունաբերական նշանակության տարածքներ, նավթի և գազի խոշոր զարգացումներ, ներառյալ խոշոր խողովակաշարերը
- Սեւ և գունավոր մետաղների խոշոր գործառնություններ, լայնածավալ ցելյուլոզի և թղթի արդյունաբերություն
- Խոշոր նավահանգիստների զարգացումներ, մեծ ջերմային կամ հիդրոէներգետիկայի զարգացում
- Մեծ քանակությամբ թունաքիմիկատների և հանքային պարարտանյութերի արտադրություն, օգտագործում կամ ուտիլիզացիա
- Վտանգավոր և (կամ) թունավոր նյութերի արտադրություն, փոխադրում և օգտագործում
- Կենցաղային և վտանգավոր թափոնների հեռացման գործունեություն
- Զբոսաշրջության լայնածավալ զարգացումներ
- Խոնավ գործընթացների ներգրավմամբ լայնածավալ տեքստիլ արդյունաբերություն
- Լայնածավալ տրանսպորտային նախագծեր (օդանավակայաններ, մայրուղիներ, մայրուղիներ, երկաթուղիներ)
- Նախագծեր խիստ զգայուն և բարձրարժեք էկոհամակարգերում կամ դրանց հարևանությամբ
- Նախագծեր վերաբնակեցման մեծ բաղադրիչներով և բոլոր այն նախագծերը, որոնք կարող են մեծ ազդեցություն ունենալ բնակչության վրա
- Նախագծեր, որոնք ազդում են բնիկ կամ ցեղային բնակչության վրա
- Նախագծեր, որոնք լուրջ աշխատանքային կամ առողջական ռիսկեր են առաջացնում
- Նախագծեր, որոնք լուրջ սոցիալ-տնտեսական խնդիրներ են առաջացնում

Բ դասի ոլորտներ

- Ագրոբիզնես (փոքր մասշտաբ), քաղաքային հյուրանոցներ, փոքր մասշտաբի զբոսաշրջություն, ընդհանուր արտադրություն
- Քիմիական արդյունաբերություն, առանց դյուրավառ, պայթուցիկ կամ վտանգավոր նյութերի մեծ քանակությամբ պահեստավորման, պլաստմասե իրերի արտադրություն
- Մրգերի և բանջարեղենի, ձկների, մսի, բուսական / կենդանական յուղերի արտադրություն, մշակում, վերամշակում և պահպանում
- Գինիների և խմորված այլ ըմպելիքների արտադրություն, կաթնամթերքի արտադրություն
- Կաշվե իրերի արտադրություն (բացառությամբ այրումից և ներկումից)
- Վերանորոգման և տեխնիկական սպասարկման խանութներ
- Բնական և սինթետիկ գործվածքների մանում, հյուսում, ավարտական տեսքի բերում և տպագրություն
- Փայտանյութերի արտադրություն, սղոցում
- Շպոնի, ֆաներայի և այլ փայտանյութերի արտադրություն
- Փոքր էլեկտրակայաններ
- Շինարարություն գործունեության ոլորտ

Գ դասի ոլորտներ

- Բիզնես ծառայությունների մատուցում (բիզնեսի խորհրդատուներ, հաշվապահություն, աուդիտ և այլն)
- Ռեստորանների և այլ սննդի օբյեկտների հիմնում
- Կրթություն և ուսուցում
- Հեռարձակում (հեռուստատեսություն, ռադիո, արբանյակ)
- Առողջություն և ընտանիքի պլանավորում
- Համակարգչային սարքավորումների ձեռքբերում
- Արվեստի, դիզայնի, հեռահաղորդակցման ստուդիաների սարքավորումներ և հիմնում
- Բնական և սինթետիկ գործվածքների մանում, հյուսում ավարտական տեսքի բերում
- Դերձակի և հագուստի պատրաստման խանութներ
- Կաշվե իրերի և հագուստի արտադրություն
- Խորհրդատվական գործունեություն
- Կյանքի ապահովագրության ընկերություններ
- Անշարժ գույքի վարձակալություն գործունեության

Առևտրային գործունեությունը դասակարգվում է այն ոլորտի դասով, որի հետ առևտուրն ունի առնչություն: